ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-385-04.10.2022-ՏՏԳԾ-011/0), «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-3851 -04.10.2022-ՏՏԳԾ-011/0), «Բույսերի սորտերի պահպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-3852 -04.10.2022-ՏՏԳԾ-011/0), «Սերմերի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-3853 -04.10.2022-ՏՏԳԾ-011/0), «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-3854 -04.10.2022-ՏՏԳԾ-011/0), «Օրգանական գյուղատնտեսության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-3855 -04.10.2022-ՏՏԳԾ-011/0), «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-3856 -04.10.2022-ՏՏԳԾ-011/0), «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-3857 -04.10.2022-ՏՏԳԾ-011/0) եւ «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-3858 -04.10.2022-ՏՏԳԾ-011/0) վերաբերյալ վերաբերյալ ներկայացված առաջարկների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ					
1.	**ՀՀ Կառավարություն**	6-րդ հոդված	Մշտադիտարկումն իրականացվում է յուրաքանչյուր ԳՁՕ-ի եւ դրա գործածության նկատմամբ՝ գիտականորեն հիմնավորվածության եւ թափանցիկության ապահովմամբ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված մշտադիտարկման մեթոդներն ու ուղեցույցները: Մշտադիտարկումն իրականացվում է լիազոր մարմնի կողմից հաստատված ԳՁՕ-ների հարցերով փորձագիտական խմբի կողմից:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

			Հարկ է նկատել, որ քննարկվող կարգավորմամբ մեկուսացված համակարգերի մշտադիտարկման գործընթացին վերաբերող կարգավորումների նախատեսումը՝ այդ թվում մշտադիտարկման ենթարկվող օբյեկտների իրավունքները, դրանց սահմանափակումները եւ պարտականությունները, թողնվում են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի մակարդակում, քանի որ Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ մշտադիտարկման չափանիշները, կենսաանվտանգության ապահովման նորմերը սահմանում է լիազոր մարմինը: Միաժամանակ՝ Նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նշում է կատարվում մշտադիտարկում իրականացնող իրավասու սուբյեկտի վերաբերյալ, այն է՝ լիազոր մարմնի կողմից հաստատված ԳՁՕ-ների հարցերով փորձագիտական խումբ, սակայն, փորձագիտական խմբի իրավասությունների, այդ թվում պարտականությունների, կարգավիճակի, ձեւավորման վերաբերյալ Նախագծում կարգավորումները բացակայում են:		
2	**ՀՀ Կառավարություն**	2-րդ հոդվածի 1-ին մաս	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե նորմատիվ իրավական ակտում օգտագործվում են նոր կամ բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, կամ այլ նորմատիվ ակտով տրված է այդ հասկացությունների կամ տերմինների այլ սահմանում, ապա տվյալ ակտով տրվում են այդ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ակտի էությունից բխող դրանց սահմանումները: Սահմանումները պետք է լինեն այնպիսին, որ ապահովեն դրանց միատեսակ ու միանշանակ ընկալումն ու կիրառումը: Հիմք ընդունելով նշված դիտարկումները եւ դրույթները՝ առաջարկում ենք վերանայել Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասով Նախատեսված կարգավորումները:		
3	**ՀՀ Կառավարություն**	5-րդ հոդված 2-րդ մաս	Նախագծի մի շարք կարգավորումներում առկա է հետեւյալ ձեւակերպումը՝ «ԳՁՕ-ների ներմուծումը, տնօրինումը, օգտագործումը, պահպանումը, տեղափոխումը, փորձարկումը, ստացումը կամ այլ կերպ գործածումը», մինչդեռ Նապագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանվում է «ԳՁՕ գործածություն» հասկացությունը՝ ԳՁՕ հետազոտություն, ստացում, փորձարկում, պահպանում, տնօրինում, օգտագործում, ներմուծում, տեղափոխում, ոչնչացում ցանկացած ձեւով՝ ներառյալ դրանց հետ կապված արտահանումը: Հիմք ընդունելով նշվածն՝ առաջարկում ենք ԳՁՕ-ի հետազոտության, ստացման, փորձարկման, պահպանման, տնօրինման, օգտագործման, ներմուծման, տեղափոխոխման, ոչնչացման հետ կապված իրավահարաբերությունները նկատի ունենալիս Նախագծում կիրառել Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հասկացությունը: Միաժամանակ՝ հարկ է նկատել, որ Նախագծի 5-րդ հոդվածի 7-րդ մասում առկա է հետեւյալ ձեւակերպումը՝ «Մեկուսացված համակարգում ԳՁՕ-ների գործածությունը, այդ թվում՝ ներմուծումը, արտահանումը»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4	**ՀՀ Կառավարություն**	8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետեր	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանվում է «ԳՁՕ-ների գործածության հետ կապված կենսաանվտանգություն» հասկացությունը՝ միջոցառումների ամբողջություն,	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ինչը երաշխավորում է ԳՁՕ-ների ցանկացած անբարենպաստ ազդեցության բացառումը շրջակա միջավայրի, մարդու կյանքի ու առողջության եւ կենսաբազմազանության վրա: Հիմք ընդունելով մեջբերվածը՝ առաջարկում ենք հստակեցնել Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերի «կենսաանվտանգության հնարավոր բացասական ազդեցություն» եւ «կենսաանվտանգության հետեւանքով շրջակա միջավայրին, մարդու կյանքին եւ առողջությանը, գյուղատնտեսական նշանակության հողերին սպառնացող վտանգներ» ձեւակերպումները:		
5	**ՀՀ Կառավարություն**	7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «արտահանման» բառից հետո լրացնել «եւ ոչնչացման» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6	**ՀՀ Կառավարություն**	9-րդ հոդվածի 4-րդ մաս	Նախագծի 9-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «8-րդ հոդվածի 3-րդ մասի» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
7	**ՀՀ Կառավարություն**	1-ին հոդված և 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է. «Նորմատիվ իրավական ակտում միեւնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միեւնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»: Վերոգրյալը հիմք ընդունելով՝ առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված (այսուհետ՝ ԳՁՕ) բառերը հանել, իսկ Նախագծի 1-ին հոդվածով նշված «(այսուհետ՝ ԳՁՕ)» ձեւակերպման մեջ լրացնել «նաեւ» բառը «այսուհետ» բառից հետո:	Ընդունվել է:	Ընդունվել է:

8	**ՀՀ Կառավարություն**	2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում առաջարկում ենք «ՀՀ» հապավումը փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է. «Արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաեւ բառերի կամ տերմինների հապավումներ»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
9	**ՀՀ Կառավարություն**	5-րդ հոդվածի 7-րդ մաս	Նախագծի 5-րդ հոդվածի 7-րդ մասում առկա «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» ձեւակերպումից առաջարկում ենք հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-ր հոդվածի 3-րդ մասի պահանջը՝ օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
10	**ՀՀ Կառավարություն**	9-րդ հոդվածի 4-րդ մաս	Նույնը վերաբերելի է նաեւ Նախագծի 9-րդ հոդվածի 4-րդ մասում «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի կրճատ անվանման մեջ հիշատակված, «Բույսերի սորտերի պահպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առկա, «Սերմերի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առկա, ինչպես նաեւ այդ հոդվածով «Սերմերի մասին» օրենքի 1-ին հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 3-րդ մասում առկա, «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առկա, «Օրգանական գյուղատնտեսության մասին»	Ընդունվել է:	Ընդունվել է:

			օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առկա, «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առկա, «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առկա «Հայաստանի Հանրապետության» բառերին:		
11	**ՀՀ Կառավարություն**	Բոլոր հոդվածներ	Նախագծի ողջ տեքստում առաջարկում ենք բոլոր հոլովաձեւերով առկա «Հայաստանի Հանրապետության կառավարություն» եւ «ՀՀ կառավարություն» բառերը փոխարինել «Կառավարություն» բառով՝ համապատասխան հոլովաձեւերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը՝ նորմատիվ իրավական ակտում միեւնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միեւնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ եւ Կառավարության՝ Սահմնադրությամբ նախատեսված անվանումը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
12	**ՀՀ Կառավարություն**	2-րդ հոդվածի 1-ին կետ	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետում կիրառվում է «եւ (կամ)» ձեւակերպումը: Հարկ է նկատել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ նորմատիվ իրավական ակտում կարող է կիրառվել կա՛մ «եւ», կա՛մ «կամ» շաղկապը, մինչդեռ «եւ (կամ)» գրելաձեւը կիրառելի չէ: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք վերանայել Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետում կիրառված «եւ (կամ)» ձեւակերպումը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
13	**ՀՀ Կառավարություն**	3-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում առկա է խմբագրման անհրաժեշտություն:	Ընդունվել է:	Ընդունվել է:

14	**ՀՀ Կառավարություն**	3-րդ գլուխ	Առաջարկում ենք վերանայել Նախագծի 3-րդ գլխի կարգավորումները:	Ընդունվել է:	Ընդունվել է:
15	**ՀՀ Կառավարություն**	9-րդ հոդվածի 7-րդ մասի 4-րդ կետ	9-րդ հոդվածի 7-րդ մասի 4-րդ կետով նախատեսված կարգավորման շարադասությունը բացակայում է, ուստի առաջարկում ենք խմբագրել այն՝ կարգավորումը հստակեցնելու նպատակով	Ընդունվել է:	Ընդունվել է:
16	**ՀՀ Կառավարություն**	11-րդ հոդված	11-րդ հոդվածում Նախագծի համապատասխան հոդվածներին կատարվող հղումները հստակ չեն: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերում հղումները կատարվում են հստակ եւ ուղղակի, հիմք ընդունելով նշվածն՝ առաջարկում ենք Նախագծի 11-րդ հոդվածում հստակեցնել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին վերաբերող հղումները, ինչը նաեւ հնարավորություն կտա ապահովելու Նախագծի անցումային դրույթների կիրարկումը: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծի 11-րդ հոդվածի 1-3-րդ եւ 6-րդ մասերով սահմանվող ենթաօրեսնդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են նույն մարմնի կողմից եւ նույն ժանկետում՝ առաջարկում ենք դրանք սահմանել մեկ մասով: Նախագծի 11-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերում սահմանված չէ, թե կոնկրետ որ մարմինը պետք է ընդունի համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը Նախագծի պաշտոնական հրապարակումից հետո վեց ամսվա ընթացքում: Առաջարկում ենք Նախագծի 11-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերում հստակ նշել, թե որ մարմիններն են ընդունում այդ մասերում	Ընդունվել է:	Ընդունվել է:

			նշված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը:		
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին»					
1	**ՀՀ Կառավարություն**	1-ին հոդված	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք «բովանդակությամբ «110.3 » -րդ եւ «110.4 » -րդ հոդվածներով» ձեւակերպումը փոխարինել «բովանդակությամբ 110.3-րդ եւ 110.4-րդ հոդվածներով» ձեւակերպմամբ:	Ընդունվել է	Ընդունվել է:
2	**ՀՀ Կառավարություն**	1-ին, 2-րդ, 3-րդ հոդվածներ	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի ողջ տեքստում, ինչպես նաեւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացվող նոր հոդվածների համարներից առաջ գրված «ՀՈԴՎԱԾ» բառերն առաջարկում ենք փոխարինել «Հոդված» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է. «( ) Հոդվածի համարից առաջ գրվում է «Հոդված» բառը»:	Ընդունվել է	Ընդունվել է:
«Բույսերի սորտերի պահպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին»					
1	**ՀՀ Կառավարություն**	վերնագիր	«Բույսերի սորտերի պահպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում առաջարկում ենք	Ընդունվել է	Ընդունվել է:

			«ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառը փոխարինել «ԼՐԱՑՈՒՄ» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ վերոնշյալ նախագծով «Բույսերի սորտերի պահպանության մասին» օրենքում կատարվում է ոչ թե փոփոխություն, այլ լրացում:		
«Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում լրացում կատարելու մասին»					
1.	**ՀՀ Կառավարություն**	վերնագիր	«Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄ» բառը փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը եւ այն հանգամանքը, որ նախագծով «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում կատարվում է ոչ թե լրացում, այլ փոփոխություն:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.		1-ին հոդված	«Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի խմբագրումը համապատասխանեցնել օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին:	Ընդունվել է:	Ընդունվել է:
«Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին»					
1.	**ՀՀ Կառավարություն**	Վերնագիր, 1-ին հոդված	«Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում նշված «(այսուհետ՝ Օրենք)» բառերն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Օրենք» բառը վերոնշյալ նախագծում այլեւս չի կիրառվում:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			«Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է «Պետական տուրքի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 18-րդ կետը լրացնել նոր՝ 21-րդ ենթակետով: Հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» օրենքի 19-րդ հոդվածի կետերի եւ ենթակետերի համարակալման սկզբունքը՝ առաջարկում ենք «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծում «21» թիվը փոխարինել «18.18» թվով:		
«Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին»					
1	**ՀՀ Կառավարություն**	1-ին հոդված	«Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առկա, «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առկա «Հայաստանի Հանրապետության» բառերին:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2	**ՀՀ Կառավարություն**	1-ին հոդված	«Լիցենզավորման մասին» օրենքն ընդունվել է 2001 թվականի մայիսի 30-ին: Բացի այդ՝ նշենք, որ «Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ բաժնում որեւէ կետ առկա չէ, հետեւաբար հասկանալի չէ այն 7.5-րդ կետով լրացնելու նպատակը: Առաջարկում ենք վերոգրյալի հիման վրա համապատասխան փոփոխություններ կատարել «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում:	Ընդունվել է:	Ընդունվել է:
«Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին»					
1	**ՀՀ**	1-ին, 2-րդ հոդված	«Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում լրացում	Ընդունվել է	Ընդունվել է:

	Կառավարություն		կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 5.2-րդ հոդվածի 3-րդ մասում լրացնել նոր՝ 34-րդ կետ: Միեւնույն ժամանակ՝ քննարկվող լրացման բուն տեքստից հետո նշված է «բառերով» բառը: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում «բառերով» բառը հանել: Առաջարկում ենք նաեւ նշված նախագծում օրենքի լրիվ անվանման մեջ կիրառված « ՀՕ 143-Ն» ձեւակերպումը փոխարինել «ՀՕ-143-Ն» ձեւակերպմամբ:		
«Սերմերի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին					
1	**ՀՀ Կառավարություն**	վերնագիր	«Սերմերի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առկա ձեւակերպումից առաջարկում ենք հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-ր հոդվածի 3-րդ մասի պահանջը՝ օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը:	Ընդունվել է	Ընդունվել է: